պետին ի ժամ, և զՄաչատուր վարդապետն այլ բերին անդ ի մօտ եղիազար վարդապետն և զհացն կեբաք: Եւ անտի իմ եղեալ գնացի ի տուն Մղտեսուն և անտի ի տուն: Եւ երեկոյիս գնացի ի ժամ Սուրբ Նիկողոս, և ելեալ ի ժամուն ի տուն գնացի:

Օրս զԱլի աղան սպանեցին՝ զքեհեա (պարտ), որ էր և նա խորհրդակից հետ զօրպայիցն:

Ի՟ւն (26 Մայիս) առաւօտուս գնացաք ի խանութ: Եւ մօտ յետնուցս ձայնեաց Թագաւորն զՀնկիչէր աղասին և հատեալ զգլուխն ձգեաց ի դուրս ի Տէմիրզափուն վանն Գ պատճառի. նախ զի Շաբաթ օր որ գնաց ի Քէհատխանան եւ անդ Գ մարդ գտեալ՝ երկուքն տաճիկ եւ մին զաւազ, եւ ի զաւազսկէն կաթս խնդրէին նոքա, եւ նա գնացեալ թէ Տաճ, եւ Թագաւորն ի վերայ գայ եւ տեսանէ զարան եւ մի քարընկէց յառաջ տեսանէ զոմն սպանեալ և ի մէջ արեան թաւալեալ, և ըմբռնէ զարան թէ Դուք արարեալ էք զբանս, և զերկուսն տայ ի թին և զմինն որ էր էնկիչէրի՝ ուղարկէ ի դուռն աղային: Եւ այսօր զայս եհարց Թագաւորն ցըաղան թէ Զայն մարդն ի՞նչ արարիր, և նա ասացեալ թէ Տվի յօտապաչին, չգիտեմ թէ զի՛նչ արաւ նորա. և Թագաւորն ի բարկութիւն եկեալ թէ Զարեան տէրն ես՝ քեզ ուղարկեմ և դու զայն արձակե՞ս. թէզ այժմ զայն զի՛տ լինձ: Եւ նա ել արտաքս եւ չատ որոնելով այսր և անդր ի մէջ քաղաքիս եւ ի դուրսն՝ ոչ գտին մինչև ի ժամս, եւ մտեալ առաջի Թագաւորին թէ Ոչ գտի. վասն այնորիկ եւ սպանանել Թագաւորն զնա: Եւ դարձեալ ասացին թէ Յորժամ սպահին եւ էնկիչէրին ի մի վայր եկեալ խնդրեցին զսեւաքն եւ զմեծամեծքն, յայնժամ եւ սա խորհրդակից եղեալ նոցա, ուղարկելով սոցա մարդ թէ Ուզեցէ՛ք զմարդիքն զայն և ձեր բանին հաստատ կացէ՛ք: Եւ դարձեալ ասացին թէ Ի ժա-